Մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Անդրանիկ Բարությանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, <<Ֆիզկուլտուրա>> / 56 դասաժամ/, <<Ինֆորմատիկա>> /15 դասաժամ/ , <<Պատմություն>> / 21 դասաժամ/, <<Տեխնոլոգիա>>/ 6 դասաժամ/, <<ՀԵՊ>> / 8 դասաժամ/ ,<<Ռուսաց լեզու >> /23 դասաժամ /, <<ՆԶՊ>> առարկաների ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հոկտեմբերի 19-ին՝ ժամը 15:00-ին**, Մարմարաշենի Անդրանիկ Բարությանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ Արարատի մարզ, համայնք Մարմարաշեն, Երևան- Արտաշատ խճուղի 71:

Տեղեկությունների համար զանգահարել 093976480 հեռախոսահամարով